

**Տ. ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ ԲԱԲԱՅԱՆԻ ԶԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՆԻՍՈՒՄԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(13 հունվարի 2005 թ.)

*«Եւ իբրևս լցան ատորք ութ թլփաարևլ զևս,
և կոչեցաւ անունս նորս Յիսուս, որ կոչեցևաւ
էր ի Նրեշարակէն»:*

(Ղուկ. Բ 21)

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ. Ամէն»:

Սիրելի հավաքացյալներ,

Ս. Ծննդյան և Աստվածահայրնության պարզևած հոգևոր ուրախությունն ու ցնծությունը շարունակվում է, քանի որ ութ օր առաջ ծնված մանուկը, Ում հովիվները ճանաչեցին որպես Օծյալ Տիրոջ, Ում հրեշտակները փառաբանեցին որպես Փրկչի և Ում մոգերը երկրպագեցին որպես թագավորի, անուն սրացավ:

Այսօր մեր Նորածին Տիրոջ անվանակոչության օրն է, երբ, ըստ մովսիսական օրենքի, «ութ օրերը լրացան, և Նա թլփաարվեց, Նրա անունը Նիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր...» (Ղուկ. Բ 21): Նարկանշական է, որ միայն այս մեկ փողն է ընտրված որպես ավերարանական ընթերցում, որն էլ մեր բնաբանն է: Մակայն ով լսելու ականջ ունի, այս քիչն էլ բավական է՝ հասկանալու այն ամենը, ինչ ամփոփված է ավերարանական այս փողում:

Այսօր անունների հեղի կապված սովորությունները և նրանցում ամփոփված իմաստները շատ բանով են փարբերվում հետոմ ընդունված կարգից: Այսօր անունը միայն միջոց է, որով կարող ենք ինչ-որ մեկին զանազանել իր նման շար-շարերից, իսկ հետոմ անունը ոչ միայն զանազանության միջոց էր, այլ նաև արքայապարտ էր այն կրող անձին բնորոշ հարկությունները, առաքելությունը և բնավորության գծերը: Նույն մարդկության պատմության հենց առաջին օրերից փրվում էին անուններ, որոնք ունեին որոշակի իմաստներ: Օրինակ՝ առաջին մարդու անունը՝ Ադամ, նշանակում է «մարդ կարմիր հողից», այսինքն՝ կավից, իսկ Եվա՝ «կյանք», որովհետև նա մայր դարձավ բոլոր ապրողների համար, և նմանօրինակ իմաստներ ունեն գրեթե բոլոր աստվածաշնչյան անունները:

Մեր Նորածին Տերն էլ, որպես մարդ, ունեցավ մարդկային անուն: Տիրոջ անունը դրվեց Նիսուս, որ նշանակում է Փրկիչ, և հրեական Նեսու անվան հունարեն համապարասխան ձևն է, որ «Աստված Փրկիչ» կամ «Աստծո Փրկություն» իմաստներն ունի, այսինքն՝ Նիսուս նշանակում է մեր փրկությունը: Նա մեր Փրկիչն է:

Մարթեոսի Ավերարանն սկսվում է «Գիրք ծննդյան Նիսուսի Քրիստոսի» խոսքերով: Նիսուս անվանը մի նոր անուն է ավելանում՝ Քրիստոս, որ հունարեն նշանակում է Օծյալ և

համապարասխանում է եբրայերեն Մեսիա անվանը, այսինքն՝ օժում ունեցող: Հին Կրակարանում յուրով օժված լինելը նշանակում էր, որ մարդ հարուկ առաքելության է կոչված Ասրժուց, և հինկրակարանյան երեք առաքելության ծառայողները՝ մարգարեներ, քահանաներ և թագավորներ, օժում էին սրանում: Իսրայելին, ովքեր սպասում էին Փրկչի, Ասրված խոսքացել էր, որ պիտի գա մեկը, Ով Մովսեսի նման լինելու է մարգարե, Մելքիսեդեկի պես քահանա և թագավոր՝ ինչպես Դավիթը, այսինքն՝ Նա լինելու էր Տիրոջ Օծյալը: Եվ այս պարճառով էլ հենց Մարթոնու շրապում է հայտարարել, որ Հիսուս՝ Փրկիչը, հենց Ինքը խոսքացված Մեսիան՝ Օծյալն է, քահանայապետը և Դավթից սերող թագավորը: Եկեղեցու հայրերից Ս. Կյուրեղ Երուսաղեմացին այս իրողությունն այսպես է բացատրում, որ «Հիսուս Քրիստոս երկու անուն ունի. Հիսուս, որովհետև փրկում է, և Քրիստոս, քանի որ քահանայագործում է»:

Հիսուսի Մեսիա՝ Օծյալ լինելը հավաստելու համար Մարթոնու Նրա ծննդյան դեպքերը պարմում է մարգարեությունների լույսի ներքո: Ասրժու հրեշտակը հովսեփին ասում է, որ մանուկը Սուրբ Հոգուց է և «Նրա անունը Հիսուս պիտի դնես...»:

Սակայն այս ամենը եղավ, որպեսզի կարարվի, ինչ որ Տիրոջ կողմից ասվել էր Եսայի մարգարեի միջոցով. «Ահա կույսը պիտի հղիանա և մի որդի պիտի ծնի, և նրան պիտի կոչեն Էմանուել, որ նշանակում է՝ Ասրված մեզ հետ» (Մարթ. Ա 23):

Որպեսզի քարակուսանք ջիհի, կանխավ ասենք, որ այս երկու անուններն էլ՝ Հիսուս և Էմանուել, Ասրված է փայլա Իր Որդուն, մեկը հրեշտակի միջոցով, մյուսը՝ Իր մարգարեի, և ավերարանիցն այս պարագային փեղի ունեցածը փաստում է հրեաների համար հեղինակություն հանդիսացող Հին Կրակարանով, որպեսզի ցույց փա, թե Հիսուսով են իրականում մարգարեությունները:

Հիսուս՝ Փրկիչ անունը բազմանշանակ է: Այն իր առաքելության մեջ ներառնում է ոչ միայն ընտրյալների փրկությունը, այլև փրկությունը համայն մարդկության, որի համար էլ հենց Նա աշխարհ է եկել: Մինչ 30 փարեկանը Հիսուս պարզ կյանքով էր ապրում այն մարդկանց մեջ, որոնց պիտի փրկեր. հովսեփ արդարի հետ հյուսնություն էր անում՝ ոչնչով չբարբերվելով մյուսներից:

Սակայն 30 փարեկանում հովհաննեսից մկրտվելով հորդանան գետում՝ Նա դառնում է Քրիստոս, Տիրոջ Օծյալ, Ում մասին հայրը վկայում է, թե «Դա՛ է Իմ սիրելի Որդին, որն ունի Իմ ամբողջ հաճությունը» (Մարթ. Գ 17): Այսպեղ է, որ Ասրված հայրնում է, թե Հիսուս Իր Որդին է: Հորդանանի մկրտությամբ է Հիսուս, Ով ի սկզբանե Օծյալն էր, աշխարհին հայրնվում և Հիսուս Քրիստոս անունը դառնում է նվիրական և շարերի համար՝ փրկություն, քանի որ կույրերն սկսեցին փեսել, կաղերը՝ քայլել, բորոպները՝ մաքրվել, խուլերը՝ լսել, մեռելները՝ հարություն առնել, և աղքատները՝ Ավերարանին ունկնդիր լինել:

Մարդկությունը փրկելու առաքելության առաջին իսկ քայլերից մենք՝ Նրան հավատարացողներս զգում ենք Նրա անվան ամբողջ գորությունը, որի մասին Պողոս առաքյալը եփեսացիներին ասում է, թե Ասրված Հիսուս Քրիստոսին ամեն անունից վեր. նստեցրեց (հմար եփես. Ա 21):

Մեր կյանքում որևէ մեկի անունը փալ, կրել կամ օգտագործել՝ մեծ պարասխանավություն է ենթադրում: Առավել ևս մեր՝ քրիստոնյաներիս պարագային, որ Հիսուս Քրիս-

տրոսի անունն ենք կրում, այդ պարասխանավորությունն էլ ավելի մեծ է: Սակայն արդյոք գիտակցում ենք այդ մեծ շնորհի ու պարվի արժեքը: Արդյոք ունենք պարասխանավորության այն մեծ զգացումը և գիտակցությունը, որ մեզ վրա ենք վերցրել որոշակի պարտականություններ:

Չնայելով մեր հանցանքներին, Աստված մեզ թույլ է տվել այդ անունն օգտագործել և այդ անվանն ապավինել, որն ապացույցն է հայրական այն մեծ սիրո, որ Նա փառում է մեր՝ Իր արարածների հանդեպ, այն նշանն է հայրական այն հոգաբարության, որով Նա շրջապարել է մեզ: Ուրեմն մենք պարտավոր ենք ու պարասխանավորությունն ունենք զգուշորեն և երկյուղածությամբ կրելու այդ անունը, այնպես որ՝ մեզ վնաս չլինի, այնպես, որ չլինի, թե զուր փեղն Աստված անունը փանք:

Մեր կապը Տիտուսի հետ սկսվում է մեր մկրտության պահից, երբ մկրտվելով Քրիստոս ենք զգենում: Մկրտությունից հետո մեր Փրկչի անունը և Նրա նշանը՝ Խաչը, մեզ վրա է լինում, և մենք կարող ենք այն օգտագործել ինչպես մեր սեփականը: Աստված այս Մուրբ անունով շար բան է թույլ տվել մեզ կատարելու, հաղթելու անտեսանելի թշնամուն, հաղթելու մահին և խոսելու Իր՝ մեր Երկնավոր Հոր հետ: Տիտուս Քրիստոսի անունն անձնավորում է հենց Իրեն: Ասել կամ որևէ բան կատարել Նրա անունով, նշանակում է, որ ասել կամ կատարել է Ինքը՝ Տիտուս, և դա մեծ պարասխանավորություն է: Իրոք, Տիտուս Քրիստոսի անունն իշխանություն ունի մեծ փոփոխություններ իրականացնելու: Իր անվան այդ յուրահատկությունը շեշտում է հենց Ինքը՝ Տիտուս, երբ Իր աշակերպներին ասում է, թե «ինչ Իմ անունով Իմ Հորից ուզեք, պիտի փա ձեզ» (Ղով. ԺԶ 24): Ավետարաններում հաճախ ենք հանդիպում Նրա անվամբ կատարված հրաշագործությունների: Տիտուսի համբարձումից հետո առաքյալները Նրա անվամբ էին բժշկություններ կատարում, Նրա անվամբ էին դներ հալածում և Նրա անվանն էին ապավինում հեթանոս աշխարհներում Ավետարանը քարոզելիս:

Դրա համար էլ մենք պարտավոր ենք արժեկորել այն, զնահաբել և պահպանել անպակաս ու մաքուր: Մեր երկրորդ պարտականությունն է ուրեմն, ինչպես հստակորեն պարվիրված է մեզ Տասնաբանյալում, Տիրոջ անունը չհարաշահել, որովհետև «Տերը արդար չի համարում նրան, ով Իր անունը զուր փեղն է արտասանում» (Ելից Ի 7)՝ սրանով մեկ անգամ ևս ցույց տալով, որ սուրբ է Իր անունը և մեզանից համապարասխան վերաբերմունք է պահանջվում:

Տիտուս, Ով ասում է՝ Ես և Հայրս մի ենք, մեզ աղոթել սովորեցնելիս պարվիրում է, որ ասենք. «Հայր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը» (Մատթ. Զ 9): Մի՞թե մենք, ուսուցանված և պարվիրան սրացած լինելով, իրավունք ունենք Երկնավոր մեր Հոր Մուրբ անունը անարգել: Մի՞թե Նրան, Ով չխնայեց Իր Միածին Որդուն մեր փրկության համար, կարող ենք փոխել ուրիշների հետ: Արդյոք չպիտի միաձայնենք Կորնթի որդիներին և ասենք. «Մի՞թե մոռացել ենք մենք մեր Աստված անունը կամ ձե՞ռք ենք մեկնել օտար աստվածների. չէ՞ որ Աստված դա կիմանա, քանի որ Նա քննում է գաղտնիքները մեր սրտի» (Մաղմ. ԽԳ 21-22): Նրանք քաջ գիտակցում էին, որ Աստված նախանձախնդիր է Իր անվան սրբությանը, ուստի չէին համարձակվում իրենց շուրթերը պղծել այլ աստվածների անուններով: Այսպեղից էլ մեր երրորդ պարտականությունը՝ սուրբ պահել Տիրոջ անունը:

Մենք նույնպես անուններ ունենք և մեր աչքի բիբի նման հոգ ենք փանում նրանց մասին: Թույլ չենք փախիս, որ այն անպարվեն, ստորացնեն, չարախոսեն ու վարկաբեկեն: Որքան առավել ապա Աստված, Ով մեծ է մեզանից: Մի՞թե Նա անփութեր պեպք է մնա, թե ինչպես են մարդիկ վերաբերվում Իր անվան հետ: Մի՞թե թույլատրելի է, որ մենք, որ հոգ ենք փանում մեր անվան համար, թեթևամտությամբ ու անհոգությամբ վարվենք՝ այդպիսով շարժելով Տիրոջ բարկությունը:

Մենք քրիստոնյա ենք կոչվում Նրա անունով, Նրան աշակերտած լինելով, ինչպես առաջին անգամ քրիստոնյաներ կոչվեցին Անպիտքի հավաքացյալները (հմմտ. Գործք ԺԱ 26): Նա, ում երկյուղած երկպագում են հրեշտակները և ումից սարսափում են դևերը, միայն մեզ է թույլ փվել կրելու Իր անունը: Նիսուս Քրիստոս՝ մեր Օծյալ Փրկիչը միայն մեզ է շնորհ փվել Իրենը լինելու: Թերանալով քրիստոնյայի մեր պարտականություններում՝ չշարժենք Տիրոջ բարկությունը:

Քիչ հեկո բոլորս, որ Նիսուս Քրիստոսի անուն ենք կրում, պիտի մոտենանք և հաղորդվենք Նրա կենարար Մարմնին ու Արյանը: Կրկնելով ծածուկ աղոթքը, որ նաև մկրտության ժամանակ է ընթերցվում, հայցենք Տիրոջից ու ասենք.

Ո՛վ Տեր Աստված մեր, որ մեզ՝ Քո Միածին Որդու անունով քրիստոնյաներ կոչեցիր, որ մեղքերի թողության համար հոգևոր ավազանով մկրտություն շնորհեցիր և արժանի դարձրիր Քո Միածնի Սուրբ Մարմնին ու Արյանը հաղորդվելու, այժմ աղաչում եմ քեզ, Տեր, արժանի արա մեզ այս սուրբ խորհուրդը՝ մեղքերի թողության համար ընդունել Քեզ Որդուդ և Սուրբ Հոգուդ հետ ու գոհությամբ փառավորել, այժմ և միշտ և հավիպյալս հավիպենից. ամեն: